Նա կարօտ է աւելի մանրամասն մշակութեան։ «Դաւիթ և Մհերը» արժանի է լուրջ ուսումնասիրութեան և համեմատական քննադատութեան։ Այն ակնարկները, որ անում է պ. Լէօն Ֆիրդուսիի Շահ Նամէլի հերոսի վերաբերմամբ, չատ են թռուցիկ և պատահական։ Պ. Լէօն հակւած է կարծելու, որ մեր վէպը ինքնուրոյն է և պարսկական Ռուստամիադայի արձագանքը չէ։ Թէև այդ կարծիքը հաւանական է, այնուամենայնիւ պահանջւում է ուսումնասիրութեան վերայ հիմնւած եզրակացութիւն։ Լէօն փորձում է լամենալն դէպս համեմատել Մհերին և Ռուստամին միմեանց հետ՝ իբրև մեծ դիւցազնական ոյժեր (թէև տարբեր լատկութիւններով), բայց աւելի լաւ կը լինէր՝ եթէ համեմատութիւնը մնար Դաւիթ վերայ։ Առանձին-առանձին առած՝ գուցէ Պարոն Աստղիկին կարելի լինէր մօտեցնել մասամբ Զոհրաբին, Սառիալին—նմանեցնել Կելկաուսի երկրորդական կին Սուդաբէին, և այլն։ Մհերը ըստ երևութին ինքնուրոյն դիւցազն է, աւելի հին ծագումով և լետոյ է խառնւել տեղական հերոսների հետ։

Այս համեմատութիւնները գուցէ որոշէին Շահնամէլի և մեր ժողովրդական վէպի մէջ եղած նմանութիւնը (եթէ նա էական է և ոչ պատահական) և տալին մեզ կարողութիւն—ընդհանուր իրականից—դտնելու բուն հայկականը և տեղականպատմականը։

Ըստ երևոյթին Սասունականի (Սասունիադա) հիմքը կազմում է տեղական պատմութիւնը, որի մէջ ծծւել է հին դուսանական դիւցազներգութիւնը։ Թողնելով դիտական-քննադատական հետազօտութեան մասին մեր խօսքը մի լարմար առիթի—այժմ պ. Լէօի գրքոյկի վերաբերմամբ՝ լայտնենք դանկութիւն, որ նա դտնի ընթերցողների մեծ չրջան մեր հասարակութեան մէջ։

Վատ չէր լինիլ, եթէ մէկը փորձ փորձէր Դաւիթ և Մհեր վէպը աւելի հասարակ և դիւրամատչելի լեզուով տար մեր ժողովրդին—առանձին ժամանագին գրքոյկով։

Քլ.

ԿԱՐՄԷՆ ՍԻԼՎԱ (Եղիսաբէթ, Թագուհի Ռումինիոյ) «ՕՄՈՒԼ» մանական վէպ, թարգմանեց Գրիգոր Տահբուդաղեանց։

Ինչ կ'ասէիք մէկին, որը տեսնելով խեղդւողին և ձեռքի տակ ունենալով նաւ և փրկելու միւս գործիքները, դէն չպռտէր այդ բոլորը և ինքն նետւէր կատաղի հոսանքի մէջ, խեղդւողին փրկելու համար. չէիք ասիլ, որ նա անմիտ է վարւում, որ նա չէ օգտւում իւր ձեռքի տակ եղած միջոցներից իւր մերձաւորին փրկելու համար։ Աւելի խիստ չէիք դատապարտիլ մի արքայազնի, որը սաստիկ ծարաւ ունենալով թեթեւացնել տառապեալների և թշւառների վիճակը, թողնում է հայրենական տունը և դորա հետ միասին ապագայում թագաւոր լինելու լոյսը և հա-

սարակ մարդու անունով զբաղւում է այսպիսի գործերով, ինչպիսիքն են. օգնել մի պառաւ կնոջ՝ նորա ծանր բեռը տուն հասցնելու. խնամել վիրաւորւածին, իբրև բանւոր օգնել աղքատ գիւղացիներին, բժշկել հիւանդներին և այլն։ Չէ որ մնալով թագաժառանգ և ժամանակով գահի հասնելով՝ նա կարող էր անհամեմատ մեծ չափերով խնամք տանել հիւանդների, ծերերի, աղքատների և այլ սրանց նման թշւառների մասին, առաջ բերելով համապատասխան հիմնարկութիւններ. ով ցանկանում է օգնել իւր մերձաւորին, նա իւր իշխանութիւնը, գիրքը պիտի միայն ծառայացնէ այդ նպատակին, և ոչ թէ հրաժարւի նորանից, բացի ի հարկէ այն հանգամանքներից, երբ դրանք արգելք են լինում նպատակին հասնելու համար։ Այսպիսի մի արքայազն է գրքի հերոսը։

Բայց եթէ երևակայենք, որ գրքի հերոսը մի արքայազն չէ, այլ մէկը, որը իւր ձեռքի եկածով աշխատում է թեթևացնել տառապեալների վիճակը, մենք կը տեսնենք, ինչպիսի ինքնազոհութեան ընդունակ է մարդկային բնաւորութիւնը, երբ նա տոգորւած է սիրով դէպի իւր թշւառ եղբայրը. դէպի իւր մերձաւորը և իբրև մի այսպիսի անձնաւորութեան պատկեր. այս գիրքը կունենայ իւր բարոյական ազդեցութիւնը ընթերցողի վերայ։ Կասկածելի է միայն, թէ որքան մի այդպիսի անձնաւորութիւն հասկանալի կը լինի մանուկներին. մեզ թւում է, թէ մանուկներին հասկանալի կարող է լինել ծնողական, որդիական, ընկերական սէրը, բայց ոչ սէր դէպի մարդը առհասարակ, երբ մէկը այդպիսի սիրով ոգևորւած գործում է, ուշք չ'դարձնելով մարդկային ապերախտութեան, անձնական թշւառութեան վրայ և իւր վարձատրութիւնը իւր խղճից սպասելով։

Բայց չը նայած դորան, գրքոյկը կարող է հետաքրքրութեամբ կարդացւել. գոնէ Ռուսաստանում արւած փորձը այդ է ցոյց տալիս։ Մանուկների շրջանում այդ հեքեաթը կարդալուց յետ, լաւ աղջիկներից մէկը բացականչել է՝ «կարծեմ մենք երբէք այդպիսի լաւ հեքեաթներ չենք կարդացել», իսկ միւսը՝ խելօքներից ասել է՝ «ես կ'ուզենայի, որ այդ պատմութիւնը երբէք չ'վերջանար» (Համեմատէք «Что читать народу, հատոր II, երես 401)։

B.

ՌՍՑՆԱ ԳԷՕՐԳԻԵՒԱՑԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ (*կրճատութեամբ թարգմանւած*)։ *Մոսկւա. տպարան Մկրտիչ Բարխուդարեանի*, 1891. *փոքրադիր ութածալ* 67 *երես, տառ* № 12, *գինն է* 5 *կոպէկ*։

Այս փոքրիկ ինքնակենսագրութեան մէջ արձանագրւած է բուլղար ժողովրդի իւր վերակենդանութեան համար արած ճիգերի պատմութեան